

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅԱՆ  
ՆԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

(Կ. Մարքսի մահվան 100-ամյակի առթիվ)

Ս. ՀԱԿՈՐՅԱՆ

Կ. Մարքսի մուտքը մարդկության մտավոր պատմություն և նրա ստեղծած գիտական ժառանգությունը հեղափոխական վիթխարի նշանակություն ունեցան: Ֆ. էնգելսի հետ համատեղ մշակելով գիտական կոմունիզմի տեսությունը, Կ. Մարքսը հիմնավորեց կապիտալիստական հասարակարգի անխուսափելի կործանման և սոցիալիզմի հաստատման օրինաչափությունները: Իր տեսական և պրակտիկ գործունեության ճանապարհին նա հաղթահարել է հսկայական դժվարություններ՝ վերամշակելով մինչ այդ կուտակված ամբողջ հասարակագիտական միտքը և վերակառուցելով բանվոր դասակարգի պայքարի ձևերն ու պրակտիկ գործունեությունը: Այս իրո՞ք տիտանական գործունեության մեջ թերևս իրեն հավասարը չունի կապիտալիստական ֆորմացիայի բազմակողմանի վերլուծությունը, որի ընթացքում Կ. Մարքսը միաժամանակ կոնկրետացրեց ու գիտական կատարելության հասցրեց մատերիալիստական գիտելիության, նրա միջուկը՝ ուսմունքը հակասությունների մասին: Ինչպե՞ս է այս ուսմունքը շարադրված Կ. Մարքսի «Կապիտալիզմ»<sup>1</sup>: Մենք այն ներկայացնում ենք երեք հիմնական փուլերով:

Ա) Կապիտալիստական հասարակության հիմնական հակասության ծագման պրոցեսը: Ապրանքը արտադրության կապիտալիստական եղանակի տարրական ձևն ու ելակետն է, «մի արտաքին առարկա, մի իր, որը իր հատկությունների շնորհիվ բավարարում է մարդկային որևէ պահանջմունք»<sup>2</sup>: Այդ «օգտակար իրերը» ունեն երկու կողմ՝ որակ և քանակ: Իրի օգտակարությունը (սրակական կողմը) արտահայտում է նրա սպառողական արժեքը, որը կազմում է «հարստության իրային բովանդակությունը»: Բայց այդ իրերն ունեն նաև քանակական կողմ, որը նրանց տալիս է այլ իրերի հետ փոխանակելու ունակություն, այսինքն՝ ապրանքը ոչ միայն անմիջական սպառողական արժեք է, այլև իր մեջ պարունակում է փոխանակային հատկություն, այսինքն՝ նաև փոխանակային արժեք է, որի դերը մի սպառողական արժեքի փոխանակումն է մեկ այլ սպառողական արժեքով, դարձյալ մարդկային որևէ պահանջմունք բավարարելու համար: Սակայն փոխանակության պրոցեսում ապրանքի մեջ «չքանում են» նրա անմիջական օգտակար հատկությունները, որոնք կոնկրետ

<sup>1</sup> Այս հարցը վերլուծված է Մ. Մ. Ռոզենտալի «Диалектика «Капитала» Карла Маркса» М., 1967., աշխատության մեջ:

<sup>2</sup> Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, եր., 1954, էջ 41: Այս գրքից մեջբերումների էջերը՝ տեքստում:

ձևով տեսանելի ու շոշափելի են դարձնում նրա որակական հատկությունները: Ապրանքային փոխանակության պրոցեսում փոխանակային արժեքներն արտահայտվում են այլևս զգացարար շրնկալվող մեկ այլ հատկությամբ՝ «արտարակտ աշխատանքով»: «Աշխատանքի արդյունքի օգտակար բնույթի հետ,— գրում է Կ. Մարքսը,— չբանում է նաև նրա մեջ ներկայացված աշխատանքի տեսակների օգտակար բնույթը, հետևաբար և աշխատանքի այդ տեսակների տարբեր կոնկրետ ձևերը» (էջ 44): Փոխանակվող բոլոր ապրանքները արտահայտվում են արտադրության մեջ ծախսված աշխատուժով, նրանց մեջ կուտակված արտարակտ աշխատանքով: Հենց այս հատկության շնորհիվ էլ ապրանքները կարող են փոխանակվել, բայց այս հատկությունը արմատապես տարբերվում է ապրանքների առաջին հատկությունից՝ սպառողական արժեք լինելուց: Կ. Մարքսը ապրանքի հենց այս հատկության վերլուծության շրնորհիվ կարողացել է հայտնագործել և հիմնավորել կապիտալիստական հասարակության գոյության և շարժման օրենքները: Իրը կարող է ապրանք չլինել, եթե նույնիսկ մարդկային աշխատանքի արդյունք է: «Նա, ով իր աշխատանքի արդյունքով իր սեփական պահանջմունքն է բավարարում, միայն սպառողական արժեք է ստեղծում, բայց ոչ ապրանք... Ապրանք դառնալու համար արդյունքը պետք է փոխանակության միջոցով (ընդգծումը իմն է.— Ս. Ն.) հանձնվի այն մարդու ձեռքը, որին նա ծառայում է որպես սպառողական արժեք» (էջ 47):

Ապրանքի էության վերլուծության մարքսյան մեթոդը դիալեկտիկական է: Այս մեթոդը նրան հնարավորություն տվեց վերլուծելու ապրանքի բովանդակությունը, այն իրային հարաբերությունները, որոնք գոյանում են մարդկանց միջև ոչ միայն սոցառողական արժեքներ արտադրելիս և դրանց փոխանակման, այլև ապրանքների թաքնված հատկության՝ փոխանակային արժեքի հայտնաբերման ժամանակ, որի վրա ձևավորվում են բուրժուական հասարակության բոլոր հարաբերությունները: Հայտնագործելով ապրանքի երկակի բնույթը, նա հարստացնում է հակասության մասին դիալեկտիկական ուսմունքը: Այն, որ իրերը հակադրությունների միասնություն են և նրանց ուսումնասիրության դիալեկտիկական մեթոդը պահանջում է «միասնականի երկատում և նրա հակասական մասերի ճանաչում»<sup>3</sup>, երևում է ոչ միայն Կ. Մարքսի կողմից ապրանքի երկակի բնույթի, այլև փոխանակային արժեքի բովանդակության հետագա վերլուծության ժամանակ նրա մեջ կուտակված մարդկային աշխատանքի երկակի բնույթի հայտնագործումով: Այն նույնպես չբանում է, «և՛թի վերանանք արտադրողական գործունեության որոշակի բնույթից և, հետևապես, աշխատանքի օգտակար բնույթից» (էջ 50): Կապիտալիստական հասարակության գիտական վերլուծությունը անհնարին կլինի, եթե Կ. Մարքսը ապրանքն ու ապրանքային արտադրությունը չքննարկեր որպես հակադրությունների միասնություն, որպես մի պարզագույն երևույթ, որի մեջ, Վ. Ի. Լենինի արտահայտությամբ՝ «բուրժուական հասարակության այս յրջիչի» մեջ բացահայտվում են բուրժուական հասարակության բոլոր սաղմերը, «ցույց է տալիս այդ հակասությունների և այդ հասարակության զարգացումը»<sup>4</sup>:

<sup>3</sup> Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 29, էջ 387:

<sup>4</sup> Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 5, էջ 389:

Ապրանքների թե սպառողական և թե փոխանակային արժեքները մարդկային կոնկրետ և արքայական աշխատանքի որոշակի քանակ են: Բայց սպառողական արժեքի համար նշանակություն ունի ապրանքի մեջ պարունակվող աշխատանքի լոկ որակը (ինչպես է կատարվում աշխատանքը, ինչ է արտադրվում), իսկ ապրանքի արժեքի համար՝ միայն քանակը:

Ինչպես ապրանքի (սպառողական արժեք և արժեք), այնպես էլ նրա արժեքի մեջ (կոնկրետ աշխատանք և արքայական աշխատանք) որակն ու քանակը իրար դեմ կանգնած են որպես հակադրություններ, որոնց դիալեկտիկական միասնությունը արտահայտում է ապրանքի բովանդակությունը կապիտալիստական հասարակության մեջ: Այդ հակասությունը հանդես է գալիս հարաբերության ձևով: Սպառողական արժեքները արժեք են այն ժամանակ, երբ ապրանք են դառնում և կորցնում են իրենց մարմնական ձևերը, այն էլ միայն «իրենց երկակի բնույթի շնորհիվ, միայն այն բանի շնորհիվ, որ նրանք միաժամանակ թե՛ սպառման առարկաներ են և թե՛ արժեք կրողներ»<sup>3</sup> (էջ 54): Դեռ ավելին, միայն փոխանակության պրոցեսում, երբ իրար դեմ կանգնում են ոչ թե ապրանքները, այլ նրանց տերերը՝ փոխանակողները, միայն հասարակական հարաբերությունների մեջ կարող է երևան գալ արժեքը: Ուրեմն, արժեքը գոյություն ունի միայն հասարակակն հարաբերությունների մեջ: Որպես հակադրությունների դիալեկտիկական միասնություն, որտեղ հակադիր կողմերը միաժամանակ գտնվում են և՛ միասնության մեջ, և՛ բացառում են միմյանց, ապրանքի ու նրա արժեքի մեծությունների հակադիր կողմերը շրջանառությունից դուրս (այսինքն հասարակական հարաբերությունից դուրս) լոկ հակադրություններ են, որոնք «բեռնապես բացառում» են միմյանց: Այդպիսին է ապրանքի արժեքի հարաբերական և համարժեքային ձևերի փոխադարձ կապը:

Կ. Մարքսը քննադատելով բուրժուական քաղաքատնտեսությունը, գրել է, որ հենց այդ հակասության անտեսումը բուրժուական տնտեսագետներին հնարավորություն չի տվել պարզելու, թե ինչպես է երկու ապրանքների արժեքային հարաբերության մեջ իր պարզ արտահայտությունը գտնում ապրանքի արժեքը: Բուրժուական տնտեսագետները արժեքի ձևերի այդ երկու կողմերը տեսնում են միայն հակադրությունների մեջ, որպես իրար մեկընդմիջ բացառող հակադիր կողմեր և այսպիսի հակադրությունների մեջ կատարում են համեմատություններ: Այնինչ նրանք մոռանում են, որ «տարբեր իրերը քանակապես համեմատելի են դառնում միայն այն բանից հետո, երբ նրանք մի որոշ միասնության են վերածված» (էջ 56—57): Իսկ դա ապրանքային արտադրության արդյունքներից մեկն է, քանի որ միայն ապրանքային արտադրության պայմաններում հնարավոր է գտնել այն արքայական աշխատանքը, որը հանդես է գալիս որպես ամենատարբեր ապրանքների արժեքների համընդհանուր ձև և չափանիշ: Իսկ քանի որ, ինչպես գրում է Կ. Մարքսը, մարդկային աշխատուժը հստակ վիճակում արժեք է ստեղծում, բայց ինքը՝ աշխատանքը արժեք չէ և արժեք է դառնում միայն կարծրացած վիճակում, առարկայացված ձևով, ապա միայն արժեքային հարաբերության մեջ կարող է իսկապես արքայական աշխատանքը դառնալ ապրանքների արժեքների մեծությունը կարգավորող համընդհանուր ձև: Շնորհիվ այս հանգամանքի Կ. Մարքսը հայտնագործեց, որ հակադրությունների անընդհատ և անվերջ մեկը մյուսին փոխարկման պրոցեսը վերլուծելով միայն կարելի է թափանցել բուրժուական ապրանքային արտադրության, հետևապես, բուրժուական հա-

սարակութեան էութեան մեջ: Արժեքային հարաբերութեան մեջ մի ապրանքի նատուրալ ձևը, կորցնելով իր որակական բովանդակությունը՝ սպառողական արժեքը, դառնում է արժեքի ձև և, ընդհակառակը, որոշակի ապրանքներ, որոնք արժեքի համարժեքային ձևեր են, կարող են ընդունել իրենց ապրանքային բովանդակային ձևերը, եթե կորցնում են իրենց այդ հատկությունները և դառնում են սպառողական արժեքներ:

Բուրժուական հասարակական հարաբերությունների էությունը հենց այն է, որ նրանք այլ բան չեն, քան ապրանքային արտադրության վրա հենված մարդկային հարաբերությունների ուղղակի տիպ, որտեղ տեղի է ունենում ապրանքի, նրա մեջ կուտակված աշխատանքի և արժեքային տարբեր մեծությունների՝ մեկը մյուսին անցման, մեկը մյուսին փոխարկվելու անընդհատ պրոցեսը: «Քանի որ ոչ մի ապրանք չի կարող իրեն հարաբերել՝ իբրև համարժեքի և, հետևաբար, չի կարող իր բնական արտաքինը իր սեփական արժեքի արտահայտությունը դարձնել, ուստի նա պետք է ուրիշ ապրանքի հարաբերի իբրև համարժեքի կամ մի ուրիշ ապրանքի բնական արտաքինը դարձնի արժեքի իր սեփական ձևը» (էջ 64): Այս երևույթն արտահայտվում է այն պրոցեսի ձևով, որ հակադրություններն անընդհատ փոխարկվում են մեկը մյուսին՝ կոնկրետ աշխատանքը վերածվում է մարդկային արտադրող աշխատանքի և հակառակը: Ապրանքի այսպիսի հակադրամիասնությունը, հակադրությունների անցումը մեկը մյուսին հնարավոր է միայն բուրժուական արտադրական հարաբերությունների պայմաններում, հասարակական հարաբերությունների այն ձևի պայմաններում, երբ ապրանքները իրար դեմ կանգնում են որպես մարդկային միևնույն արտադրող աշխատանքի հավասար ֆունկցիոններ, «միայն այսպիսի հասարակության մեջ, որտեղ ապրանքային ձևն աշխատանքի արդյունքի ընդհանրական ձևն է, և, հետևաբար, մարդկանց, որպես ապրանքատերերի, միմյանց հետ ունեցած հարաբերությունն է տիրապետող հասարակական հարաբերությունը» (էջ 67):

Ապրանքի արժեքային ձևերի զարգացման հետագա ընթացքը վերլուծելիս 4. Մարքսն ապացուցում է այն դրույթի ճշմարտացիությունը, որ այդ ընթացքը լրիվ համապատասխանում է արժեքի ձևի երկու կողմերի հակադրության զարգացմանը: Դրա պատճառն այն է, որ արժեքի հարաբերական և համարժեքային ձևերը համամասնորեն են զարգանում, այն, որ արժեքի համարժեքային ձևը դիալեկտիկական միասնության մեջ է գտնվում հարաբերական ձևի հետ, այսինքն՝ առանց արժեքի հարաբերական ձևի գոյության և շարժման չկա համարժեքային ձև, որ «համարժեքային ձևի զարգացումը արժեքի հարաբերական ձևի զարգացման արտահայտությունն ու հետևանքն է միայն» (էջ 75): Արժեքի այդ երկու ձևերի առարկայական պրոցեսը, որպես բուրժուական հասարակական հարաբերությունների հետագա զարգացման պայման, տեսականորեն արտահայտվել է դիալեկտիկական հակասության ուսմունքի մեջ: «Այն նույն աստիճանով, որով զարգանում է արժեքի ձևն ընդհանրապես, զարգանում է նաև նրա երկու բևեռների՝ արժեքի հարաբերական ձևի ու համարժեքային ձևի հակադրությունը» (էջ 75): Ապրանքային արտադրության հետագա կատարելագործման պրոցեսում ավելի ակտիվորեն է դրսևորվում արժեքի համարժեքային ձևը, որը գնալով ավելի ընդհանրական ձև է ընդունում: Որպեսզի ապրանքային արտադրության վրա հենված հասարակության գործառնությունը կատարելագործվի, անհրաժեշտ է ավելի բարձր ընդհանրացում ունեցող արժեքի ձև, որը կունենա օբյեկտիվ կալուսու-

թյուն և առավել ընդհանուր հասարակական նշանակություն: Դա ապրանքի յուրահատուկ տեսակն է, որին Կ. Մարքսը, անվանել է փողային ապրանք, կամ փող: «Ապրանքային աշխարհում,— գրել է Կ. Մարքսը,— ընդհանրական համարժեքի դեր կատարելը դառնում է նրա առանձնահատուկ հասարակական ֆունկցիան» (էջ 77): Այդ արտոնյալ տեղը, ըստ Կ. Մարքսի, պատմականորեն նվաճել է մի յուրահատուկ ապրանք, այն է՝ ոսկին:

Այսպիսով, ապրանքի և արժեքի ներքին հակասությունները, որոնք արտադրության պրոցեսում ունեն բացառապես իրային, առարկայական բնույթ, իրենց արտահայտությունները հիմնովին փոխում են փոխանակային պրոցեսում: Ծագում է այսպես կոչված ապրանքային ֆետիշիզմը իր խորհրդավոր գաղտնիքներով, իսկ բուրժուական արտադրության հիմնական նպատակը զարգացման իր առաջին փուլում դառնում է ավելի ու ավելի շատ ապրանքների արտադրելը փոխանակման համար, որը, ինչպես հետո կտեսնենք, հանդիսանալու է հավելյալ արդյունքի կուտակման հիմքը, կապիտալի արտադրման ու վերարտադրության նյութական բազան: Այդ իրային, առարկայական հարաբերությունները իրենց բացարակտ արտահայտությունը գտնում են հասարակական հարաբերությունների մեջ և ստանում են հասարակական հարաբերությունների ձև: Սակայն արտադրողների համար այդ հարաբերությունները պատկերվում են որպես իրերի հասարակական հարաբերություն: «Այնինչ աշխատանքի արդյունքների ապրանքային ձևն ու այն արժեքային հարաբերությունը, որով արտահայտվում է արժեքը, բացարձակապես ոչ մի ընդհանուր բան չունեն իրերի ֆիզիկական բնության ու սրանից բխող՝ իրերի հարաբերությունների հետ: Այդ լուկ իրենց՝ մարդկանց որոշ հասարակական հարաբերությունն է, որը նրանց աչքում իրերի հարաբերության ֆանտաստիկ ձև է ընդունում» (էջ 80):

Ընդհանրացնելով, կարող ենք ասել, որ կապիտալիստական հասարակության հիմնական հակասության ծագումը այլ բան չէ, քան ապրանքային արտադրության ծագման պրոցես, ապրանքների, որպես փոխանակության համար արտադրվող իրերի արտադրության պրոցես, մի երևույթ, որը կորցնում է իր առարկայական-զգայական բնույթ ունեցող հարաբերության տեսքը և հանդես է գալիս հասարակական հարաբերությունների տեսքով: Ապրանքափոխանակության ընթացքում ապրանքները փոխանակում են ոչ միայն իրենց «Տոգինները, այլև մարմինները»: Ապրանքատիրոջ համար ապրանքը այլևս սպառողական արժեք չունի, այն միայն փոխանակային արժեքի կրող է: Նրա համար այն ոչ թե կոնկրետ-մասնավոր աշխատանքի արդյունք է, այլ բացարակտ-հասարակական աշխատանքի ընդհանրական արդյունք: Յուրաքանչյուր ապրանքատեր օտարում է իր ապրանքը, փոխանակելով այնպիսի ապրանքի հետ, որն ունի որևէ սպառողական արժեք և բավարարում է իր որևէ պահանջմունք: Ապրանքային արտադրության զարգացման այս փուլում կապիտալիզմի հիմնական հակասությունը գտնվում է իր ծագման ու լինելիության պրոցեսում: Անհրաժեշտ է ապրանքների արտադրության և ապրանքների փոխանակության ու շրջանառության կազմակերպման այնպիսի մակարդակ, որը հնարավորություն կտա փողի փոխարկմանը կապիտալի: Իսկ այս պրոցեսին նախորդում է փոխանակության ծավալման ու զարգացման մի երկարատև պատմական պրոցես, որը զարգացնում է սպառողական արժեքի ու արժեքի այն հակադրությունը, որը «նիրհելու» է ապրանքի բովանդակության ու բնույթի մեջ: Ապրանքի երկակի բնույթը և նրա

հակասականությունը փոխում է իր ձևը, որն այժմ արտահայտվում է ապրանքի և փողի երկատվելու միջոցով («դարձյալ միասնականի երկատում»):

Կապիտալիստական հասարակության ծագման այս փուլում՝ ապրանքային արտադրության ծագման ու զարգացման պրոցեսում, կալիտալիզմի հիմնական հակասությունը արտացոլում է այն բոլոր նյութական պայմաններն ու միջոցները, որոնց հետագա ծավալումն ու զարգացումը հանգեցնելու է մանր արտադրության ոչնչացման ու հասարակական հանրայնացված արտադրություն ստեղծելուն մի կողմից և հավելյալ արդյունքի առաջացման և դրա կապիտալի վերածման՝ մյուս կողմից: Փոխանակության և ապրանքների շրջանառության հետագա ծավալումը հիմքից փշրում է ապրանքային արտադրությունը, կյանքի է կոչում հակասական ու իրար բացասող հարաբերություններ: Ապրանքն այդ պրոցեսում անընդհատ կերպարանափոխվում է: Ապրանքի առաջին կերպարանափոխությունը՝ Ա—Փ, իր մեջ արտահայտում է ապրանքային արժեքի անցումը ապրանքային ձևից փողի ձևի, որի մեջ «չի կարելի տեսնել, թե ինչ ապրանք է փող դարձել»: Իր փողային ձևի մեջ ամեն մի ապրանք ճիշտ նույն տեսքն ունի, ինչպես և մի ուրիշը» (էջ 118—119): Ապրանքի երկրորդ կերպարանափոխության մեջ՝ Փ—Ա, տեղի է ունենում առաջինի հակառակ պրոցեսը, վաճառքի պրոցեսը փոխվում է զնման պրոցեսով: Սակայն եթե այս պրոցեսին նայենք որպես անընդհատ ու անվերջ կրկնվող մի պրոցեսի, որը տեղի է ունենում ոչ թե եզակի ապրանքատերերի և անհատ գնողների միջև, կամ հակառակը, ապա մենք գործ կունենանք մի կախարդական երևույթի հետ, որը անընդմեջ կրկնվում է՝ անընդհատ փոխելով շարժման ուղղությունը: «Ապրանքի այս երկու հակադիր փոխակերպումները,— գրում է Կ. Մարքսը,— իրականանում են ապրանքատիրոջ երկու հակադիր հասարակական ակտերի մեջ և արտացոլվում են նրա երկու հակադիր տնտեսական ձևերի մեջ» (էջ 120):

Այս շրջապտույտը տեսականորեն Կ. Մարքսն արտահայտել է հակասության շարժման ձևով՝ հակադիր էություններ, փոխանակման պրոցես (շրջապտույտ), վերադարձ նախկին ձևերը (ապրանքային ձև, ապրանքային ձևի թորափում, վերադարձ դեպի ապրանքային ձևը): Այս շրջապտույտը ապրանքային արտադրության այն իրական հողն է, որը հետագայում իր զարգացման ու ծավալման շնորհիվ ոչնչացնելու է մանր ապրանքային արտադրությունը և նյութական ու հասարակական պայմաններ է ստեղծելու կապիտալի ծագման ու շարժման համար: Այս պատճառով էլ կապիտալիզմի հիմնական հակասությունը՝ արտադրության հանրային բնույթի և յուրացման մասնավոր ձևի միջև եղած հակասությունը պետք է ձևավորվի կապիտալի նախասկզբնական կուտակման, փողի՝ կապիտալի փոխարկման հետ միաժամանակ, քանի որ նախ կապիտալի ելակետը «ապրանքային շրջանառությունն է», իսկ փողը այդ շրջանառության մեջ պետք է վերադառնա ինքն իրեն, բայց վերադառնա որոշ ավելցուկով, այսինքն՝ փոխակերպվի կապիտալի:

Քանի դեռ բուրժուական հասարակության զարգացումը չի հասել այս մակարդակին, չի կարելի խոսել բուրժուական հասարակության հիմնական հակասության հաստատման մասին: Բայց Ա—Փ—Ա և Փ—Ա—Փ շրջանառության պրոցեսները չնայած շրջապտույտային պրոցեսում արտաքնապես իրարից չեն տարբերվում կամ տարբերվում են ելակետների ու արդյունքների առումով, այնուամենայնիվ, նրանց իրական տարբերությունները ծնում են հակադիր հասարակական հարաբերություններ: Եվ այդ երկրորդ շրջա-

պտուլյտի բովանդակութեան հետագա վերլուծութեամբ Կ. Մարքսը բացահայտում է կապիտալիստական արտադրութեան, դրանով իսկ՝ կապիտալիստական հասարակութեան էությունը:

բ) Կապիտալիզմի հիմնական հակասութեան հաստատման և զարգացման պրոցեսը: Որո՞նք են այն էական տարբերությունները, որ ապրանքային շրջանառութեան պրոցեսում փողը փոխարկում են կապիտալի: Ա—Փ—Ա՝ և Փ—Ա—Փ՝ շրջանառութեան այս երկու ձևերը հակադիր են նաև իրենց բուն բովանդակութեամբ: Առաջինի դեպքում փոխանակութեան նպատակը վերջավոր է, որի ընթացքում փոխանակությունը չի կորցնում իր իմաստն ու նշանակությունը: Ապրանքատերը իր ապրանքը փողի վերածելով, գնում է մի նոր ապրանք, որը զուտ սպառողական արժեք է նրա համար և բավարարելու է որևէ պահանջմունք: Ի հակադրություն այս ձևի՝ Փ—Ա—Փ շրջանառությունը (գնում՝ հանուն վաճառքի) անվերջ պրոցես է, որի ընթացքում այն կորցնում է իր իմաստն ու նշանակությունը: «Վաճառելու նպատակով կատարվող գնման մեջ, ընդհակառակը, սկիզբն ու վերջը միևնույն բանն է, այն է՝ փողը, փոխանակային արժեքը, և արդեն հենց դրա հետևանքով տվյալ շարժումն անվերջ է» (էջ 162): Եթե առաջինի դեպքում փոխանակությունն իմաստ ու նշանակություն ունի, որովհետև ապրանքատերը՝ վաճառելով իր ապրանքը, որպես փոխանակային արժեք, ստեղծում է սպառողական արժեք՝ իր կարիքները բավարարելու համար, ապա երկրորդ դեպքում փողի շրջանառությունը իմաստ չունի, քանի որ արդյունքը նույնպես փոխանակային արժեք է՝ փող հանուն փողի: Սակայն արտաքին հայացքից այս անիմաստ թվացող շրջանառութեան մեջ խորհրդավոր ձևով թաքնված է բուրժուական հասարակութեան նյութական հիմքը: Կ. Մարքսը գիտականորեն պարզաբանում է այս անիմաստ թվացող շրջանառութեան մեջ թաքնված տնտեսական օրենքները և այն նպատակները, հանուն որոնց կատարվում է այս շրջապտուլտը:

Ոչ մի անխելք մարդ, գրել է Կ. Մարքսը, որոշ գումար չի մտցնում շրջանառութեան մեջ (գնում՝ հանուն վաճառքի), եթե արդյունքում ինչ-որ ավել բան չի ստանալու: Ընդհակառակը, այս շրջապտուլտի արդյունքը ելակետի ինքնաճումն է, այսինքն արժեքի աճումն է: Հակասութեան շարժման պրոցեսում ելակետը կերպարանափոխվելով վերադառնում է ինքն իրեն, բայց վերադառնում է ինքնաճած, հարստացած: Այս պրոցեսում փողը անվերջ կերպարանափոխվում է, բայց այլ ձև չի կարող ստանալ՝ վերադառնալու իր ելակետը, առանց ապրանք դառնալու: «Արժեքը շարունակ մի ձևից փոխվում է մյուս ձևին, սակայն երբեք չկորչելով այդ շարժման մեջ» (էջ 164): Այն դառնում է «ավտոմատիկ գործող մի սուբյեկտ»: Այդ գործող սուբյեկտն անընդհատ բացասում է ինքն իրեն և այդ հակասական բացասման պրոցեսում վերստեղծում է ինքն իրեն, անընդհատ փոխելով իր մեծությունը, բայց վերստեղծում է հավելյալ արժեքի ավելցուկով գիրացած: Այս հանգամանքի պարզաբանումը Կ. Մարքսի կողմից մեր առջև բացում է ոչ միայն ապրանքի մոգական հատկությունները, երբ ինքն իր շարժման մեջ «կենդանի ձաղկեր է ծնում կամ, առնվազն, ոսկե ձվեր է ածում», այլև բանաբի է տալիս թափանցելու կապիտալիստական շահագործման երկաթե դարպասները բացելու: Այսպիսով, «փողը կազմում է արժեքի ինքնաճման ամեն մի պրոցեսի ելակետն ու ավարտակետը» (էջ 165):

Եթե ապրանքային արտադրությունը և շրջանառությունը կապիտալի ելակետն են, ապա բուն կապիտալի առաջացումը չի կարելի բացատրել այդ

շրջանառութիւնից դուրս: Սակայն կապիտալը չի էլ կարելի բացատրել հենց շրջանառութեան պրոցեսով: Կ. Մարքսը գրում է, որ ինչքան էլ ապրանքն ու փողը կերպարանափոխվեն շրջանառութեան պրոցեսում, այնուամենայնիվ, «որպէս գնման միջոց և որպէս վճարման միջոց փողը միայն իրացնում է այն ապրանքների գինը, որոնք գնվում են, կամ որոնց համար վճարում են այդ փողով, այնինչ նա, կարծրանալով իր սեփական ձեռք մեջ, դառնում է արժեքի անփոփոխ մեծութիւնների քարացում» (էջ 177): Այնուհետև Կ. Մարքսը գրում է, որ այդ փոփոխութիւնը նույնքան քիչ կարող է ծագել շրջանառութեան երկրորդ գործողութիւնից, քանի որ ապրանքը իր մարմնական ձեռք կրկին փողային ձեռք է փոխարկվում: Հետևաբար գաղտնիքը ոչ թե փողի մեջ է, այլ ապրանքի, ոչ թե Փ—Ա—Փ-ի մեջ, այլ Ա—Փ—Ա-ի մեջ, այսինքն՝ ապրանքի սպառողական արժեքի մեջ: «Ինչպէս էլ շուռ գանք,— գրում է Կ. Մարքսը,— փաստը մնում է փաստ, եթե համարժեքներ են փոխանակվում, ոչ մի հավելյալ արժեք չի ստեղծվում, և եթև փոխանակվում են ոչ համարժեքները, ապա դարձյալ հավելյալ ոչ մի արժեք չի առաջանում» (էջ 174)\*: Կապիտալը ևս իր էութեամբ ու շարժմամբ երկակի բնույթ ունի, հակասական է: Այն «չի կարող շրջանառութիւնից ծագել և նույնքան էլ չի կարող շրջանառութիւնից դուրս ծագել: Նա պետք է ծագի շրջանառութեան մեջ և միաժամանակ ոչ շրջանառութեան մեջ» (էջ 176): Այս հակասականութիւնը Կ. Մարքսը լուծում է կապիտալիստական արտադրութիւնը վերլուծելիս՝ սկսելով այն յուրահատուկ ապրանքի շարժումն ու հատկութիւնները քննելուց, որը չի արտադրվում որպէս ապրանք, և շրջանառութեան մեջ չի մտնում որպէս պատրաստի սպառողական արժեք: Այն շրջանառութիւնից դուրս է: Բայց քանի որ շրջանառութիւնից դուրս հավելյալ արժեք չի ստեղծվում, ուստի նա սկսում է կախարդական այս գաղտնիքի վերլուծութիւնը և մեր փողատերերին տանում է մի այնպիսի խորհրդավոր շուկա, որտեղ նրանք գտնում են մի այնպիսի ապրանք, «որի հենց սպառողական արժեքն արժեքի աղբյուր լինելու արտասովոր հատկութիւն ունենար,— մի այնպիսի ապրանք, որի իսկական գործածումը աշխատանքի առարկայացման պրոցես, հետևաբար, արժեքի ստեղծման պրոցես լինելու Ծվ փողատերը շուկայում գտնում է մի այդպիսի առանձնահատուկ ապրանք—աշխատունակութիւնը, կամ աշխատուժը» (էջ 178):

Աշխատուժը որպէս յուրատեսակ ապրանք մարդու օրգանիզմի այն հոգևոր և ֆիզիկական ընդունակութիւնների ամբողջութիւնն է, որ նրա տերը գործադրում է սպառողական արժեք արտադրելու համար: Սակայն որպէս ապրանք, նրա տերը աշխատուժը միանգամից վաճառել չի կարող, այլապէս նա ամբողջութեամբ կդառնար ապրանք: Աշխատուժ ունեցող ապրանքատերը,

\* Առևտրավաշխատական կապիտալը գոյանում է Փ—Ա—Փ և Փ—Փ՝ շրջանառութեան պրոցեսում, բայց այն դեռևս կապիտալ չէ իր բուն իմաստով, որպէս բուրժուական հասարակական հարաբերութիւն, որպէս վարձու աշխատանքի շահագործման պատճառ և դրսևորում:

«... Առևտրական կապիտալի գոյութիւնը կարող է բխեցվել լոկ որպէս արդյունք այն բանի, որ թե՛ գնող և թե՛ վաճառող ապրանքատերերը երկկողմանիորեն խաբվում են պարագիտորեն մեջտեղը խցկվող վաճառականի կողմից (ընդգծ. իմն է— Ս. Ն.): Առևտրական և վաշխատական կապիտալը մի ածանցական ձև է և երկուսն էլ պատմականորեն ծագել են կապիտալի արդի հիմնական ձևից առաջ» (էջ 175, 176):



որպէս սեփականատեր, իր աշխատուժը վաճառում է մի որոշ ժամանակով՝ շրջադարելով աշխատուժի սեփականատեր լինելուց:

Այն պահից, երբ շուկայում դեմ առ դեմ կանգնում են աշխատուժի սեփականատերը և փողատերը, Ա—Փ—Ա շրջանառութիւնը արմատապես փոխում է իր բովանդակութիւնը: Բանն այն է, որ փողատերը՝ գնելով աշխատուժը և այն գործադրելով իր արտադրութեան միջոցների (հումք, արտադրութեան գործիք և այլն) շնորհիվ, միանգամից ապրանքատիրոջը զրկում է իր արտադրած ապրանքները տնօրինելու հնարավորութիւնից՝ ի տարբերութիւն պարզ ապրանքային արտադրութեան ժամանակ կատարվող շրջանառութեան: Այս ձևով սկսվող ապրանքաշրջանառութիւնը շատ քիչ բանով է հիշեցնում ապրանքային նախկին շրջանառութեանը: Դա կապիտալի արտադրութեան պրոցես է, կապիտալիստական հասարակական հարաբերութիւնների հաստատման պրոցեսը, մի հարաբերութիւն, որը ոչ բնութիւնն է ստեղծել և ոչ էլ մարդկանց կամքի ու ձեռներեցութեան արդունք է: Այն նախապատրաստվել է պատմական նախորդ դարաշրջանների բնապատմական զարգացման հետևանքով և իր հիմքում ունի կապիտալիստական պարզ ապրանքային արտադրութիւնը: «Կապիտալն առաջ է գալիս միայն այնտեղ, որտեղ արտադրութեան միջոցների ու կենսամիջոցների տերը շուկայում գրտնում է ազատ բանվորի՝ որպէս իր աշխատուժը ծախսողի» (էջ 181): Կապիտալիզմի հիմնական հակասութիւնը այս փոխհարաբերութեան արդունքն ու արտահայտութիւնն է, որի ընթացքում արտադրվում է հավելյալ արդունք և որը իրացնելիս փողատերը կապիտալ է կուտակում: Կապիտալի կուտակման իսկական պրոցեսը սկսվում է խոշոր մեքենայական արտադրութեան առաջացման հետ միաժամանակ, որը ընդունակ է արտասովոր ապրանքը՝ աշխատուժի յուրահատուկ սպառողական արժեքը արժեքի վերածելու, բացառնակապէս զրկելով աշխատուժի տիրոջը մասնակցելու ստացված արդյունքը տնօրինելու իրավունքից:

Աշխատուժի գնման պրոցեսն էլ հիմնովին տարբերվում է Ա—Փ—Ա շրջանառութիւնից: Աշխատուժի տերը շուկայում վաճառում է իր ապրանքը, բայց անմիջապէս չի ստանում նրա արժեքը: Կապիտալիստը դրա համար վրձարում է միայն աշխատուժը գործադրելուց հետո: Փաստորեն ապրանքատերը օտարում է իր աշխատուժը՝ ավանսավորելով կապիտալիստին: Աշխատուժը երկասովում է, այն մի կողմից ապրանք է, որը շուկայում վաճառվում է, մյուս կողմից մի այնպիսի սպառողական արժեք է, որը միայն աշխատանքի պրոցեսում կարող է փոխարկվել ապրանքի, որն էլ հենց իր մեջ թաքցնում է հավելյալ արժեքը: «Աշխատուժի սպառման պրոցեսը միաժամանակ ապրանքի և հավելյալ արժեքի արտադրութեան պրոցես է» (էջ 186): Կապիտալն արտադրվում է շրջանառութեան պրոցեսից դուրս, որովհետև աշխատուժն ինքնին, որպէս սպառողական արժեք, որն է մարդկային պահանջմունք չի կարող բավարարել: Նա պետք է կերպարանափոխված մտնի շրջանառութիւն և այդ կերպարանափոխութիւնը տեղի է ունենում արտադրութեան խորհրդավոր ընդերքում, որի մուտքի վրա գրված է. «Կողմնակի մարդկանց մուտքն արգելվում է» (էջ 187):

Արտադրութեան պրոցեսը ենթադրում է վիթխարի քանակով աշխատուժի սպառում: Եվ շուկայում կապիտալիստը գտնում է իր դեմ կանգնած աշխատուժի տերերին, որոնք ազատ են, հավասար և յուրաքանչյուրը ինքն է տնօրինում իր ապրանքը: Բայց հենց կապիտալիստը գնում է աշխատուժը, նա

ապրանֆափրոջը զրկում է իր ապրանքը տնօրինելու հետագա իրավունքից, նա է և՛ փաստորեն, և՛ իրավական առումով դառնում այդ աշխատուժի տերը: Մտնելով կապիտալիստի արհեստանոց՝ նա կապիտալիստին է պատկանում: Բայց կապիտալիստը, գործադրելով աշխատուժը, արտադրում է մի այնպիսի ապրանք, որի արժեքն ավելի է նրա արտադրության համար ծախսված բոլոր ապրանքների արժեքների գումարից: «Նա ուզում է ո՛չ միայն սպառողական արժեք արտադրել, այլև ապրանք, ո՛չ միայն սպառողական արժեք, այլև արժեք, և ո՛չ միայն արժեք, այլև հավելյալ արժեք» (էջ 197): Կապիտալիստական արտադրության մեջ ապրանքի արտադրության պրոցեսը աշխատանքի պրոցեսի և արժեք ստեղծելու պրոցեսի միասնությունն է: Հենց այս պրոցեսում էլ ծնվում է ոչ միայն կապիտալը հավելյալ արդյունքի ձևով, այլև կապիտալը որպես բուրժուական հասարակական հարաբերություն, որի կրողները, մի կողմից վարձու բանվորների ահռելի բանակն է, մյուս կողմից՝ փոքրաթիվ կապիտալիստները: Աշխատուժը գնելով շուկայում, կապիտալիստը հրաժեշտ է տալիս շուկային, մտնում է արտադրության օվկիանոսը, բռնում է «ոսկե ձկները»՝ արտադրում ապրանքներ միայն շուկայի համար և նորից բախում շուկայի դարպասները՝ վերադառնում շուկա: «Այդ ամբողջ պրոցեսը, նրա փողի փոխարկումը կապիտալի՝ կատարվում է շրջանառության ոլորտում... որովհետև պրոցեսը պայմանավորված է աշխատուժի գնումով ապրանքային շուկայում: Ոչ-շրջանառության ոլորտում, որովհետև... կատարվում է արտադրության ոլորտում» (էջ 206):

Ապրանքի վերլուծության ժամանակ Կ. Մարքսը ապացուցել է, որ սպառողական արժեք և արժեք ստեղծող աշխատանքների տարբերությունը աշխատուժի գործադրման ժամանակ հանդես է գալիս մեկ այլ դիալեկտիկական միասնության ձևով՝ արտադրության պրոցեսի երկու կողմերի՝ աշխատանքի պրոցեսի և արժեքի գոյացման պրոցեսի, միասնության ձևով: Վերլուծելով հաստատուն և փոփոխուն կապիտալների էությունը, նրանց հարաբերակցությունը և ազդեցությունը հավելյալ արժեքի արտադրության վրա, Կ. Մարքսը հիմնավորապես բացահայտում է կապիտալիստական հասարակության հիմնական հակասության ծավալման ու շարժման գաղտնիքները, այն մեխանիզմները, որոնց շնորհիվ ազատ, հավասար, անմեղ թվացող ապրանքափոխանակությունից ծնվում է վարձու մարդկանց անզուսպ շահագործումը, առաջանում են այն երկու հակադիր բեռները՝ աղքատությունն ու հարստությունը և այն հիմնական հակասություններն ու անտագոնիզմը, որ գոյություն ունի բանվոր դասակարգի և բուրժուազիայի միջև և դրսևորվում է դասակարգային պայքարի ձևով: Աղքատությունը որպես հասարակական երևույթ, որպես բուրժուական արտադրական հարաբերությունների արդյունք, ծագում է բուրժուական արտադրական պրոցեսում, երբ աշխատուժը միանալով արտադրության միջոցներին, ստեղծում է սպառողական արժեք՝ ապրանք: Բայց քանի որ ինքը՝ աշխատուժը վճարվել է կապիտալիստի կողմից, ապա նրա՝ ապրանքի փոխարկվելուց հետո արդյունքը լիովին պատկանում է կապիտալիստին: Աշխատուժը որպես սպառողական արժեք չբանում է, բայց չբանում է մի այլ սպառողական արժեքի մեջ: Սակայն դա աշխատուժի վերարտադրությունն է, այլ մի նոր սպառողական արժեքի վերարտադրություն: Աշխատանքի պրոցեսում աշխատուժը իրեն համարժեքը վերարտադրում է աշխատանքային օրվա կեսի ընթացքում, իսկ մյուս կեսին արժեք է ստեղծում կապիտալիստի համար: Եվ կապիտալիստի հիմնական մտածմունքը պտրտ-

վում է այն բանի շուրջը, որ միջոցներ փնտրի կրճատելու անհրաժեշտ աշխատանքը, որի ընթացքում սեղի է ունենում աշխատուժի արժեքի վերարտադրությունը: Սակայն բանվորն աշխատում է նաև անհրաժեշտ աշխատանքի սահմաններից դուրս, որի ընթացքում իր համար ոչ մի արժեք չի ստեղծում: Դա հավելյալ աշխատածամանակն է, իսկ այդ ընթացքում ստեղծված հավելյալ արժեքը բացարձակ առումով կապիտալիստին է պատկանում:

Կապիտալիստի հավելյալ արժեքը միայն աշխատուժի սպառումով չի ավարտվում: Աշխատուժի հետ միաժամանակ արտադրության պրոցեսում նա շարժման մեջ է դնում նաև արտադրության միջոցները՝ հումքը, գործիքները և այլն: Դրանք արտադրության կրկնվող պրոցեսում մնում են անփոփոխ և նորից են մասնակցում արտադրությանը՝ չփոխելով իրենց արժեքի մեծությունը: «Կապիտալի այն մասը, որ փոխարկվում է արտադրության միջոցների, այսինքն՝ հում նյութի, օժանդակ նյութերի ու աշխատանքի միջոցների, արտադրության պրոցեսում չի փոխում իր արժեքի մեծությունը» (էջ 220):

Այսպիսով, կապիտալի աշխատուժի փոխարկված մասը արտադրության պրոցեսում փոխում է իր արժեքը, որին Կ. Մարքսը տվել է փոփոխուն կապիտալ անվանումը, իսկ այն մասը, որը չի փոխում իր արժեքի մեծությունը՝ հմստատուն կապիտալ:

Կապիտալիզմի հիմնական հակասության հետագա ծավալման պրոցեսը կապիտալիստական արտադրության մեջ նրա զարգացմանը զուգընթաց հետըզհետե ավելի ու ավելի է ընդարձակվում, ընդ որում՝ ավելի թաքնված ձևով, Դա արտահայտվում է կապիտալի տարատեսակների առաջացման և ավելացման պրոցեսում: Կ. Մարքսը, քննելով աշխատանքի պրոցեսի տարբեր գործոնների՝ արդյունքի արժեքի գոյացման մեջ ունեցած տարբեր մասնակցությունների պրոբլեմը, ցույց է տալիս, թե ինչպես են գոյանում հաստատուն և փոփոխուն կապիտալները: Դրա բուն պատճառը դարձյալ աշխատուժի կողմից աշխատանքի պրոցեսում ստացած արդյունքի մեկ այլ երկակիության հետևանքն է, մի հետևանք, որ իր մեջ պարունակում է աշխատուժի արժեքը որպես հասարակական արտարակտ աշխատանք և արտադրամիջոցների այն արժեքները, որոնք թաքուն ձևով փոխանցվում են նոր արդյունքի մեջ՝ որպես արժեքներ: «Աշխատանքի սոսկ քանակական միացման միջոցով նոր արժեք է միացվում, իսկ միացվող աշխատանքի առանձին որակի միջոցով արտադրության միջոցների հին արժեքները պահպանվում են արդյունքի մեջ» (էջ 212, ընդգծ. մերն է— Ս. Ն.): Սա էլ իր հերթին միևնույն աշխատանքի հակասականության դրսևորման մի նոր ձև է, որի երկկողմանի ներգործությունը, որպես նրա երկակի բնույթի հետևանք, ստեղծում է հաստատուն և փոփոխուն կապիտալ:

Արտադրության պրոցեսում անընդհատ շարժման մեջ գտնվող փոփոխուն կապիտալը և հաստատուն կապիտալը համապատասխանաբար ստեղծում են բացարձակ և հարաբերական հավելյալ արժեքներ: Հավելյալ արժեքի, որպես բացարձակ և հարաբերական հավելյալ արժեքների գումարի, հետագա աճը առաջին հերթին պայմանավորված է հարաբերական հավելյալ արժեքի մեծացմամբ, այսինքն՝ այն գործոնով, որ կապիտալիստը իրականացնում է բոլոր միջոցներով՝ կրճատելու աշխատանքային օրվա այն մասը, որ անհրաժեշտ է բանվորին հաջորդ օրվա աշխատանքի համար վերականգնելու իր ուժերը: Ուրեմն, հարաբերական հավելյալ արժեքի ավելացման պայմանը առաջին հերթին կապված է աշխատանքային օրվա այն մասի անընդհատ կրճատ-

Ման հետ, որի ընթացքում բանվորը աշխատում է իր համար, իսկ բացարձակ հավելյալ արժեքի մեծությունը՝ միայն կապիտալիստի համար աշխատելու աշխատանքային օրվա մյուս կեսի երկարացման հետ: Այս երկուսի հակադարձ համեմատությունը արտահայտում է բանվոր դասակարգի շահագործման աստիճանի մեծացումը, հետևաբար կապված է կապիտալիզմի հիմնական հակասության ծավալման ու զարգացման հետ: Սակայն, քանի որ բացարձակ հավելյալ արժեքի արտադրությունը կապված է աշխատանքային օրվա երկարության հետ, իսկ կապիտալիստը այս հարցում սահմանափակված է և շի կարող անընդհատ ավելացնել աշխատանքային օրը այն պատճառով, որ անհրաժեշտ է աշխատուժին հնարավորություն տալ վերականգնելու իր ֆիզիկական ու մտավոր ուժերը հաջորդ օրվա աշխատանքային պրոցեսում հավելյալ արժեք ստեղծելու համար, պապ նա այլ ուղիներ է փնտրում: Հավելյալ աշխատանքի անընդհատ ծարավ կապիտալիստը այն գրտնում է հարաբերական հավելյալ արժեքի արտադրության պայմանների կատարելագործման մեջ: Կապիտալիստը հարաբերական հավելյալ արժեքի մեծացման համար վիթխարի հնարավորություններ է գտնում, արտադրության զարգացման ու կատարելագործման պրոցեսում բազմաթիվ գործոնների միջոցով (խոշոր մեքենաների օգտագործում, բանվորի պրոֆեսիոնալ հմտությունների ու վարպետության բարձրացում, աշխատանքի աճող ինտենսիվության արտադրողականության մեծացում և այլն) անընդհատ կրճատում է անհրաժեշտ աշխատանքին հատկացվող ժամաքանակը: Նա այնպիսի ռեալ պայմաններ ու հնարավորություններ է ստեղծում, որոնք թույլ են տալիս բանվորին իր աշխատուժի համարժեքն արտադրել ավելի կարճ ժամանակում: Այս իմաստով է, որ Կ. Մարքսը բացարձակ հավելյալ արժեքի արտադրությունը համարելով «կապիտալիստական սիստեմի ընդհանուր հիմքը» (էջ 533), այն միաժամանակ դիտում է որպես հարաբերական հավելյալ արժեքի արտադրության ելակետ, իսկ դրա արտադրությունը՝ արտադրության առանձնահատուկ՝ կապիտալիստական եղանակի էությունը:

Կապիտալիստը իր կապիտալի մի մասը աշխատուժի փոխարկելով ոչ միայն մեծացնում է իր կապիտալի արժեքը՝ շահույթ ստանալով բանվորից, այլև այն բանից, որ ինքը տալիս է բանվորին՝ նոր բանվորներ արտադրելու համար: «Բանվոր դասակարգի անհատական սպառումը բացարձակ անհրաժեշտության սահմաններում մի գործողություն է, որով կապիտալի կողմից աշխատուժի կողմից օտարված կենսամիջոցները կրկին փոխարկվում են կապիտալի կողմից նորից շահագործվելու համար պիտանի աշխատուժի» (էջ 599): Այս պրոցեսը կապիտալիստական արտադրության ընդհանրական պրոցեսի ամենաանհրաժեշտ մասն է, կապիտալի արտադրության ու վերարտադրության մի մոմենտը: Այսպիսով, բանվոր դասակարգը և՛ արտադրությունից դուրս, և՛ արտադրության ներսում ամբողջովին կախված է կապիտալիստից և պատկանում է նրան: «Հոռմեական ստրուկը շղթաներով էր կապված, վարձու բանվորը անտեսանելի թելերով է կապված իր տիրոջ հետ» (էջ 601), որովհետև բանվորների անհատական սպառումը մի կողմից ապահովում է նրանց պահպանումն ու սպառումը, իսկ մյուս կողմից անհրաժեշտ է դարձնում բանվորների մշտական հայտնվելը աշխատանքի շուկայում (ն. տ.): Արտադրության կապիտալիստական պրոցեսը իր ընթացքով վերարտադրում և հավերժացնում է բանվորին շահագործելու պայմանները, նրան շարունակ ստիպում է վաճառելու իր աշխատուժը ապրելու համար, իսկ կապիտալիս-

տին՝ հարստանալու համար: Այս առումով էլ բանվորը կապիտալիստին է պատկանում ավելի վաղ, քան նա իրեն վաճառում է կապիտալիստին: Դրա արդյունքը լինում է այն, որ արտադրության կապիտալիստական պրոցեսը ոչ միայն ապրանքներ, ոչ միայն հավելյալ արժեք է արտադրում, այլև արտադրում և վերարտադրում է հենց կապիտալիստական հարաբերությունները՝ մի կողմում կապիտալիստների, մյուս կողմում վարձու բանվորների բանակը:

գ) Կապիտալիզմի հիմնական հակասության էությունը: Կ. Մարքսը կապիտալիզմի հիմնական հակասության հաստատման ու ծավալման պրոցեսը հիմնավորապես նկարագրել է «Կապիտալի» այն գլուխներում, որտեղ վերլուծել է փողի՝ կապիտալի փոխարկման պրոցեսը և հավելյալ արժեքի արտադրությունը: Կապիտալիստական հասարակական հարաբերությունների զարգացման պատմական ընթացքը մեր աչքի առջև բացում է այն խորհրդավոր գաղտնիքները, որոնք հասարակությունը բաժանում են երկու հակադիր դասակարգերի՝ բուրժուազիայի և պրոլետարիատի: Բուրժուազիայի հասարակական էությունն այն է, որ նա, ընկնելով հավելյալ արժեքի անզուսպ արտադրության և հարստության դիզելու հետևից, սխտեմատիկաբար կատարելագործում է արտադրությունը, արտադրության պրոցեսի նյութական գործոնները հանուն այն բանի, որ երկարացնի աշխատանքային օրվա այն մասը, որի ընթացքում հավելյալ արժեք է արտադրվում: Արտաքին հայացքից պարզ թվացող այս միջոցառումը խորը բովանդակություն ունի և կազմում է բուրժուական հասարակական հարաբերությունների էությունը: Խոշոր մեքենաների մուտքը արտադրություն, աշխատանքի ինտենսիվության և արտադրողականության աճումը, բանվորի կրթական և գիտական, արտադրական հմտությունների ու կարողությունների, տեխնիկական մակարդակի բարձրացումը, արտաքին հայացքից խիստ հումանիտական թվացող միջոցառումների այս համակարգի անվերջ կատարելագործումը միայն մեկ հաստատուն նպատակ է հետապնդում՝ անընդհատ կրճատել աշխատուժի վերարտադրության համար ծախսվող անհրաժեշտ աշխատածամանակի քանակը: Կապիտալիստը հանդիսանում է արդյունքի միակ և լիիրավ տերը, քանի որ այդ արդյունքի յուրացման պրոցեսից նա բացարձակապես մեկուսացրել է բուն արտադրողին: Արդյունքը օտարված է արտադրողից: Արտադրության միջոցների մասնավոր սեփականության բուրժուական ձևը քանդում է այն բոլոր կամուրջները, խորտակում այն բոլոր կապերը, որոնք աշխատուժին դեռևս հրնարավորություն էին տալիս ինչ-որ չափով տնօրինելու իր արդյունքի շնչին մասը: Նա ստեղծում է մի պարզ հարաբերություն, որի մի կողմում հզոր և անհաղթ կանգնած է արտադրության միջոցների բացարձակ տերը, իսկ մյուս կողմում՝ աշխատուժից բացի ոչինչ չունեցող վարձու բանվորը: Այս երկու կողմերը իրար դեմ կանգնած են հակադիր էություններ, հակադիր շահերով ու նպատակներով, բացառում են միմյանց, միաժամանակ թե՛ մեկի և թե՛ մյուսի գոյությունը պայմանավորված է նրանց միասնությամբ: Այն ուսով հասարակական հարաբերությունները, որոնք անընդհատ վերարտադրվում են նրանց միջև՝ միևնույն ժամանակ բուրժուական հասարակական հարաբերությունների վերարտադրություն է և նրանց գոյության ձևը:

Բուրժուական արտադրության զարգացման այն պահից, երբ սկսվում է կապիտալի շրջապատույտը, կապիտալիզմի հիմնական հակասության շարժումը ստանում է ավելի դինամիկ տեսք, հավելյալ արժեքի արտադրությունը

սկսվում է ավելի մեծ մասշտաբով, որի հետևանքով արտադրությունն ավելի ու ավելի է հասարակական բնույթ կրում: Հավելյալ արժեք արտադրող կապիտալիստը, որ «անվճար աշխատանք է ծծում անմիջաբար բանվորներից», ճիշտ է, հավելյալ արժեքի առաջին յուրացնողն է, բայց վերջին սեփականատերը չէ: Արտադրության նորմալ ընթացքի համար նա հավելյալ արժեքը հետագայում բաժանում է ուրիշ կապիտալիստների հետ՝ «տարբեր կատեգորիաների» անձերի միջև, որոնց ամբողջական դեմքը կապիտալիստների դասակարգն է: Սկսվում է հավելյալ արժեքի՝ կապիտալի փոխարկման պրոցեսը և կապիտալի շրջապտույտը, որի նպատակը կապիտալի կուտակումն է: Կապիտալի կուտակման աճին զուգընթաց ընդլայնվում է կապիտալիստական արտադրությունը, ընդլայնված ձևով վերարտադրվում են կապիտալիստական հարաբերությունները՝ «ավելի շատ կապիտալիստներ կամ ավելի խոշոր կապիտալիստներ մի բևեռում, ավելի շատ վարձու բանվորներ մյուս բևեռում» (էջ 643): Կապիտալիստական արտադրության շարժման համար վարձու բանվորի աշխատուժը կապիտալիստի կողմից չի գնվում այն բանի համար, որ նրա արդյունքով կապիտալիստը իր անձնական պահանջմունքները բավարարի: «Կապիտալիստի նպատակը,— գրել է Կ. Մարքսը,— իր կապիտալի արժեքի աճեցումն է, այնպիսի ապրանքների արտադրությունը, որոնք ավելի աշխատանք են պարունակում, քան նա վճարել է, հետևապես, պարունակում են արժեքի մի այնպիսի մաս, որը կապիտալիստի վրա ոչինչ չի նստել» (էջ 648): Այսպիսով, հավելյալ արժեքի արտադրությունը կամ շահույթ կորզելը արտադրության կապիտալիստական եղանակի բացառապես օրենքն է, որը իրականում գոյություն ունի նրա հիմնական հակասության ձևով և արտահայտվում է դասակարգային պայքարի՝ նախ տնտեսական, ապա քաղաքական տեսքով: Ավելի շատ հավելյալ արժեք կորզելու և ավելի բարձր տոկոսով արտադրությունից շահույթ ստանալու նպատակով կապիտալիստը կուտակման պրոգրեսի հետ միասին անընդհատ փոխում է կապիտալի օրգանական կազմի հարաբերակցությունը՝ հօգուտ հաստատուն կապիտալի անընդհատ աճի, որի հետևանքով աշխատուժի պահանջարկը նույն հարաբերակցությամբ նվազում է ամբողջ կապիտալի աճմանը զուգընթաց՝ փոխանակ նրա աճմանը համամասն աճելու: «Այդ աճող կուտակումը և կենտրոնացումը, իր հերթին, իրենք են դառնում կապիտալի կազմի նոր փոփոխության կամ կապիտալի փոփոխուն բաղկացուցիչ մասի նոր արագ նվազման աղբյուր՝ հաստատուն մասի նկատմամբ... Կապիտալիստական կուտակումն շարունակ արտադրում է... մի հարաբերականորեն ավելցուկ, այսինքն՝ կապիտալի ինքնաճման միջին պահանջի համեմատությամբ ավելցուկ, ուստի և ավելորդ կամ լրացուցիչ բանվորական բնակչություն» (էջ 660): Բայց «լրացուցիչ բանվորական բնակչությունը» կամ գերբնակչությունը ինչքան կապիտալիստական կուտակման արդյունք է, այնքան էլ նրա լծակն է և արտադրության կապիտալիստական եղանակի գոյության պայմանը:

Ամեն մի կապիտալիստի բացարձակ շահն այն է, գրել է Կ. Մարքսը, որ որոշ փառակուրյամբ աշխատանք ֆամի ավելի փոքր թվով բանվորներից, այլ ոչ թե մեծ թվով բանվորներից, թեկուզև այս վերջինս նրա համար ավելի էժան կնստի (էջ 665—666): Հակադիր դասակարգերի բախումը պայքար է մեկ կողմից էժան բանվորական աշխատուժի շահագործման միջոցով առավելագույն շահույթ կուտակելու, մյուս կողմից՝ աշխատանքային տեղի ապահովման, աշխատանքային օրվա սահմանների պահպանման համար: «Կա-

պիտալիստական արտադրության պատմության մեջ աշխատանքային օրվա նորմավորումը հանդես է գալիս իբրև աշխատանքային օրվա սահմանների համար մղվող պայքար—պայքար հավաքական կապիտալիստի, այսինքն՝ կապիտալիստների դասակարգի և հավաքական բանվորի, այսինքն բանվոր դասակարգի միջև» (էջ 246): Այս պայքարին մասնակցում են հակադիր դասակարգերն ամբողջությամբ այն պատճառով, որ կապիտալիստական հասարակական հարաբերությունների երկաթյա բազուկներով պատնեշում են դրանց շրջանակները: Կապիտալիստները, հանրայնացնելով արտադրության միջոցները, դրանով իսկ՝ արտադրությունն ու նյութական բարիքների արտադրությունը, մասսայաբար և բացարձակապես օտարում են աշխատանքի արդյունքները բուն արտադրողներից՝ բանվոր դասակարգից: «Հանրային աշխատանքի արդյունքներն սկսեցին յուրացնել ոչ թև նրանք, ովքեր իրոք շարժման մեջ էին դնում արտադրության միջոցները և իրոք այդ արդյունքների արտադրողներն էին, այլ կապիտալիստը»<sup>5</sup>: Արդյունքների կապիտալիստական յուրացումը առճակատում է հանրային արտադրությանը, որն արտահայտվում է, նախ, կապիտալիստական յուրացման հետ հանրային արտադրության անհամատեղելիության և, երկրորդ, պրոլետարիատի և բուրժուազիայի միջև հեռավարությունից ձևով: Այս հակասությունը բուրժուական հասարակության բովանդակությունն է և նրա գոյության ձևը: Գրա հաղթահարումը անհնար է բուրժուական արտադրության սահմաններում: Լուծել այդ հակասությունը, նշանակում է ոչնչացնել բուրժուական հասարակությունը, արտադրության կապիտալիստական եղանակը, վերջին հաշվով յուրացման կապիտալիստական ձևը փոխարինել յուրացման հասարակական այնպիսի ձևով, որը բացառի արդյունքի օտարումը բուն արտադրողից: Այս պրոցեսը իրականանում է կապիտալիստական արտադրության հետագա շեշտակի և բուռն զարգացման հետևանքով, հասարակական արտադրության ընդլայնված հանրայնացման, կապիտալիստական մասնավոր սեփականությունը հասարակական սեփականության փոխարկելու և յուրացման մասնավոր կապիտալիստական ձևը խորտակելու միջոցով: Հասարակության զարգացման այս ընթացքը օբյեկտիվ պրոցես է, ենթարկվում է զարգացման դիալեկտիկական օրենքներին. «Կապիտալիստական արտադրությունը բնապատմական պրոցեսի անհրաժեշտությամբ հենց ինքն է կատարում իր սեփական բացասումը: Արտադրության միջոցների կենտրոնացումն ու աշխատանքի հանրայնացումը հասնում են այն կետին, երբ ճրանք անհամատեղելի են դառնում իրենց կապիտալիստական պատյանի հետ: Վերջինը պայթում է: Հնչում է կապիտալիստական մասնավոր սեփականության ժամը: Սեփականագրկողներին սեփականագրկում են» (էջ 796):

**С. М. АКОПЯН — Возникновение и развитие основного противоречия капитализма (к 100-летию смерти К. Маркса). — В статье автор проанализировал возникновение, становление и развитие основного противоречия капиталистического общества по «Капиталу» К. Маркса.**

<sup>5</sup> Յ. Էնգելս, Անտի Գյուրինգ, Եր., 1967, էջ 364: